

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08.09.2017

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

### ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրման և հաստատման մասին: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/
2. Ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում: Ամփոփիչ ավարտական քննական հարցաշարերի հաստատման մասին: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/
3. Ամբիոնների 2017-2018 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/
4. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/
5. Ընթացիկ հարցեր

### ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Ձեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Ա. Ներսիսյանը փաստեց, որ ֆակուլտետում նվազում է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, որը խոչընդոտ է հանդիսանում նրանց անվանական կրթաթոշակի ներկայացնելուն: Այդուհանդերձ, նման ուսանողներ կան և պետք է խրախուսել նրանց:

### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Պատմություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Ն. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 3-րդ կուրսի ուսանող Վանուհի Գևորգյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, երկու կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և այդ պատճառով նպատակահարմար է Վանուհի Գևորգյանին առաջադրել «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սիմոնյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 3-րդ կուրսի ավագ Էլինա Խաչատրյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, երկու կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և այդ պատճառով նպատակահարմար է Էլինա Խաչատրյանին առաջադրել «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողների շրջանում առաջադիմությամբ և ուսանողական հասարակական աշխատանքներում ներգրավվածությամբ աչքի է ընկել 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ Զուրաբյանը: Նա վերջին վեց կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն է ունեցել: Դեկանը ներկայացրեց նրան որպես պարտաճանաչ ուսանողի, ով նաև մասնաճյուղի Ուսանողական գիտական ընկերության նախագահն է, կազմակերպել և մասնակցել է մի շարք գիտաժողովների: Ա. Ներսիսյանը առաջարկեց Ալբերտ Զուրաբյանին ներկայացնել որպես «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սարհատյանը «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներից առանձնացրեց 4-րդ կուրսի ավագ Մերի Սարգսյանի թեկնածությունը: Զեկուցողը նշեց, որ վերջինս վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Բացի այդ՝ Մ. Սարգսյանը ոչ միայն ցուցաբերում է գերազանց առաջադիմություն, հասարակական ակտիվություն և օրինակելի վարք, այլ նաև ակտիվորեն մասնակցում է մասնաճյուղում և հանրապետությունում կազմակերպվող մի շարք

գիտական նստաշրջանների: Ձեկուցողը առաջարկեց Մերի Սարգսյանին ներկայացնել որպես «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սիմոնյանը ներկայացրեց, որ տվյալ մասնագիտության ուսանողներից առաջադիմությամբ աչքի է ընկել 4-րդ կուրսի ուսանող Հայկ Դանիելյանը: Նա վերջին չորս կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Հայկ Դանիելյանին զեկուցողն առաջարկեց որպես «Շառլ Ազնավուրի» անվան կրթաթոշակի թեկնածու:

Դեկանը «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողներից առանձնացրեց 4-րդ կուրսի ուսանող Արուսյակ Գասպարյանի թեկնածությունը: Ձեկուցողը նշեց, որ վերջինս վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Բացի այդ՝ Մ. Սարգսյանը ոչ միայն ցուցաբերում է հասարակական ակտիվություն և օրինակելի վարք: Ձեկուցողը առաջարկեց Արուսյակ Գասպարյանին ներկայացնել որպես «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատել Վանուհի Գևորգյանին որպես «Վազգեն Սարգսյան», Էլինա Խաչատրյանին՝ «Մոնթե Մելքոնյան», Ալբերտ Զուրաբյանին՝ «Դավիթ Անհաղթ», Մերի Սարգսյանին՝ «Գրիգոր Նարեկացի», Հայկ Դանիելյանին՝ «Շառլ Ազնավուր» և Արուսյակ Գասպարյանին «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ» անվանական կրթաթոշակի:

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող հինգ մասնագիտությունների կողմից դեռևս նախորդ ուստարվա ավարտին տրված կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, ամփոփիչ ավարտական քննական հարցաշարերը: Գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները և քննական հարցաշարերը նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը: Նրանք նշեցին, որ ամբիոններում քննարկվել է յուրաքանչյուր թեմայի վերնագիրը, հստակեցվել կուրսային և ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները:

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

Հաստատել 2017-2018 ուստարվա կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները և ամփոփիչ ավարտական քննական հարցաշարերը:

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով ամբիոնների աշխատանքային գործունեության պլանավորման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր: Դա կոյուրացնի ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում գործող Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Անգլերեն լեզվի և գրականության, Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնների և Ռուսաց լեզվի և գրականության սեկցիայի 2017-2018 ուստարվա աշխատանքային պլանները:

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Ձեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 2017-2018 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով

աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Դեկանը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Մարհասյանը:

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

### **ԼՄԵՑԻՆ.**

Օրակարգում ընդգրկված էր նաև ընթացիկ հարց՝

ա) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը հրատարակության ներկայացնելու հարցը/զեկ. Վ. Աղաբաբյան/

Ընթացիկ հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց պ.գ.թ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը: Նա նշեց, որ այստեղ ներկայացված են մասնագիտական բարձրագույն կրթության ծառայությունների ոլորտում որակի ներքին ապահովման առանցքային հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

Նշեց, որ աշխատությունը նախատեսված է կրթության կառավարիչների, ուսանողների և պրոֆեսորադասախոսական համակազմի, ինչպես նաև կրթական բարեփոխումներով հետաքրքրվողների համար:

Նշվեց, որ աշխատությունը գրախոսվել է տ.գ.թ., պրոֆեսոր Արմեն Ճուղուրյանի կողմից:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, ֆակուլտետի դասախոսներ: Արտահայտվողները առաջարկեցին

Երաշխավորել պ.գ.թ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը և հանձնել տպագրության:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Միջնորդել մասնաճյուղի գիտխորհրդին պ.գ.թ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը ներկայացնելու հրատարակության:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ներսիսյան

Վ. Աղաբաբյան